ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ ՌԵԿՏՈՐ,

ՊՐՈՖ. Ս. Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի նիստի որոշումից

20 հունիսի, 2022 թ.

Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ դոցենտի պ., Լ.Վ. Գալստյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ս. Երիցյանը, պրոֆ. պաշտոնակատար Հ.Դ. Ավետիքյանը, դոցենտներ մ.գ.թ., Ա.Վ. Բաղդասարյանը, բ.գ.թ., Ա.Ռ. Մարտիրոսյանը, ա.գ.թ., Ա.Ռ. Առաքելյանը, Կ.Գ. Քոչարյանը, դասախոսներ վաստակավոր լրագրող Վ.Գ. Օլքինյանը, Ա.Հր. Ղուկասյանը, Է.Բ. Ջիրջյանը, Կ. Ն. Տիտանյանը և ուրիշներ:

ԼՍԵՑԻՆ - Արման Ալեքսանդրի Սաֆարյանի «Ժամանակակից մուլտիմեդիային հարթակների զարգացման միտումները և հեռանկարները (ՀՀ և ՌԴ ԶԼՄ-ների օրինակով)» թեմայով ատենախոսությունը մասին և և Ժ.01.06. «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու հարցը:

Ներկարացվող աշխատանքը արդիական է թե՛ տեսական հարցադրումների, թե՛ հետխորհրդային տարածքում լրագրության զարգացման արդի միտումների տեսանկյուններից; Ակնհայտ է, որ լրագրության համացանցայնացման, ավանդական ԶԼՄ-ների կողմից նոր հարթակների յուրացման գործընթացի

տեսական վերաիմաստավորումը և լրագրողական դաշտի զարգացմանը նպատակաուղղված կոնկրետ առաջարկությունների մշակումը կարևորվում են ժամանակակից մարտահրավերների՝ հասարակական մեծ տեղաշարժեր ծնող տեխնոլոգիական աննախադեպ առաջընթացի պայմաններում (սոցիալական ցանցերի, սթրիմինգային ծառայությունների, մեսենջերների հանդեպ բացառիկ հետաքրքրության ու հասարակական կյանքում դրանց հարաճուն դերի համատեքստում):

Ներկայացվող աշխատանքը կարևորվում է նաև Հայաստանի Հանրապետությունում մուլտիմեդիային և կոնվերգենտ լրագրության կայացման ու զարգացման գործընթացի լուսաբանման, ընդհանրապես մշակութային ոլորտում ԶԼՄ-ների գործունեության կատարելագործման կիրառական տեսանկյուններից: Աշխատանքի կիրառական նշանակության մասին է վկայում նաև նրանում արծարծված դրույթների՝ համապատասխան ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծման գործընթացում օգտագործման հնարավորությունը:

Ատենախոսության առաջին գլխի (Մուլտիմեդիային լրագրության առանձնահատկությունները և հիմնախնդիրները) առաջին ենթագլխում՝ «Մուլտիմեդային լրագրության կայացումը, զարգացումը և առանձնահատ-կությունները», ներկայացվել է համադրվել և տարանջատվել են հաճախ որպես հոմանիշ օգտագործվող «համացանցային լրագրություն», «թվային լրագրություն», «առցանց լրագրություն», «կոնվերգենտ լրագրություն» և «մուլտիմեդիային լրագրություն» եզրույթները և գրականության մեջ առկա նրանց մեկնաբանությունները: Ատենախոսը փորձել է փիլիսոփայության և արվեստի փոխադարձ կապերի օրինակների ուսումնասիրության հենքի վրա հնարավորինս բազմակողմանի վերլուծել հումանիտար գիտություններում կոնվերգենցիայի դրսևորումները: Ներկայացվել են ռուսաստանյան կոնվերգենտ և մուլտիմեդիային լրագրության կայացման փուլերը, առաջին անգամ զուգահեռներ են անցկացվել հայաստանյան իրականության մեջ համանման երևույթների դրսևորումների ու միտումների միջև:

Նույն գլխի երկրորդ ենթագլխում՝ «Մուլտիմեդային ԶԼՄ-ների գործառութային փոխակերպումները», հեղինակը հնարավորինս համակողմանիորեն լուսաբանել է ժամանակակից լրագրության գործառութային ձևափոխումները, շեշտադրելով մասնավորապես լրագրողական նյութի ապրանքայնացման միտումները, լրագրողի պրակտիկ գործունեության և ընդհանրապես հետխորհրդային լրագրության փոփոխությունները: Այս ենթագլխում կարևորվել են «ունիվերսալ լրագրողի» մասնագիտական առանձնահատկությունների, գովազդային և ռելաքսատիվ գործառույթների՝ «ինֆոթեյնմենթի» իրողության հետ փոխկապակցվածության, ժամանակակից լրագրության մեջ «տեքստակենտրոնության» տեղաշարժի և ներկայացվող նյութի փաթեթավորման ընկալման հիմնահարցերը:

Երկրորդ գլխի («Ռուսաստանյան և հայաստանյան կոնվերգենտ ու մուլտիմեդային լրագրության զարգացման առանձնահատկությունները») առաջին ենթագլխում «Ժանրաձևաչափային մոտեցումները մուլտիմեդային լրագրության մեջ» ատենախոսը վերաիմաստավորել է լրագրության նյութերի ժանրային դասակարգման մոտեցումները՝ կոնվերգենտ և մուլտիմեդիային լրագրության իրողությունների համատեքստում: Նորովի են դիտարկվել ժանրաձևաչափային փոխակերպումների արդյունքում ի հայտ եկած, հաճախ որպես որպես ժանրեր ընկալվող, որոշ երևույթներ (մասնավորապես «լոնգրիդը», «բլոգը», «մուլտիմեդիային հատուկ նախագիծը»), բացահայտվել են դրանց կառուցվածքային տարրերը: Հատկանշական է, որ արդի լրագրության որոշ իրողություններ հայաստանյան իրականության մեջ առաջին անգամ քննության են ենթարկվում ատենախոսի կողմից: Սույն ենթագլխում ներկայացված են նաև վերոհիշյալ ժանրաձևաչաձային լուծումների դրսևորումները ռուսաստանյան և հայաստանյան լրագրության մեջ:

Նույն գլխի երկրորդ ենթագլխում՝ «Ռուսաստանյան և հայստանյան մուլտիմեդային լրագրության մեջ լրագրողական «տարածման նոր միջոցների» օգտագործումը», քննության են ենթարկվում հայաստանյան ԶԼՄ-ների համացանցում ներկայացվածության բացահայտմանը նպատակաուղղված մշտադիտարկման արդյունքում արձանագրված փորձնական տվյալները, որոնք

ատենախոսին թույլ են տվել առավել համակողմանի քննել Հայաստանի Հանրապետությունում լրագրության մուլտիմեդիականացման և կոնվերգենցիայի գործընթացները: Հարկ է նշել, որ ատենախոսը ներկայացրել է ԶԼՄ-ների՝ սոցիալական ցանցերում, սթրիմինգային ծառայություններում և մեսենջերներում ներգրավվածության արդի ցուցիչները (գիտական հրապարակումներում վերջին տարիներին համապատասխան տեղեկատվությունը բացակայել է):

Երրորդ գլխի «Մուլտիմեդային լրագրության մեջ թեմատիկ ձևափոխումների առանձնահատկությունները» առաջին ենթագլխում «Հայաստանյան ժամանակակից մուլտիմեդային դաշտը և հայ հրապակախոսության ավանդույթների յուրահատկությունները» ներկայացված են հայ հրապարակախոսության պատմության մեջ բնապահպանական հարցերի արծարծումը փաստող ուրույն նմուշներ՝ դրանք նաև կոնվերգենտ և մուլտիմեդիային լրագրության գործիքակազմով ներկայացնելու և արդի խնդիրների լուծմանը ծառայեցնելու համատեքստում:

Սույն գլխի երկրորդ ենթագլխում «Հայաստանյան մուլտիմեդային դաշտը և ազգային ինքնության հարցերը» ներկայացվում են կրթության և գիտության ոլորտի լրագրության միջազգային փորձի կոնկրետ օրինակներ՝ մուլտիմեդիային և կոնվերգենտ գործիքակազմով գիտակրթական հիմնահարցերի շրջանակը լուսաբանելու շեշտադրումով: Կարևորվում է նաև Հայաստանի Հանրապետությունում ազգային ինքնության հիմնահարցերի՝ արդիական լրագրողական գործիքակազմով պրոպագանդման անհրաժեշտությունը:

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը՝ կարելի եզրակացնել, որ հեղինակը ներկայացրել է հիմնավորված, փոխկապակցված եզրակացություններ և ուշագրավ առաջարկություններ: Մասնավորապես արժեքավոր են ատենախոսության շարադրանքից բխող՝ լրագրության տեսության համար կարևոր եզրույթների («համացանցային լրագրություն», «թվային լրագրություն», «առցանց լրագրություն», «կոնվերգենտ լրագրություն» և «մուլտիմեդիային լրագրություն») ճշգրտմանը նպատակաուղղված, արդի լրագրության մեջ «լոնգրիդի», «ինֆոթեյնմենթի», «բլոգի» իրողությունների, լրագրողական նյութի ստեղծման և տարածման գործընթացներին սպառողի մասնակցության մասին եզրակացությունները, ինչպես նաև ատենախոսի առաջարկությունները Հայաստանում գիտակրթական ոլորտի լրագրության հետագա զարգացման համար անհրաժեշտ արդիական մեխանիզմների ներդրման, բուհերում մուլտիմեդիային լրագրությանը նվիրված դասընթացների, լրագրողական նյութի առավել արդյունավետ թվայնացման, հրապարակախոսության դասական նմուշների՝ կոնվերգենտ և մուլտիմեդիային գործիքակազմով ձևավորելու մասին:

Այս ամենով հանդերձ աշխատանքը ավելի կշահեր եթե՝

1. Ատենախոսը երրորդ գլխում դիտարկեր մուլտիմեդիային և կոնվերգենտ գործիքակազմով ներկայացման ենթակա հիմնահարցերի ու թեմաների առավել լայն շրջանակ:
2. Ցանկալի կլիներ, որ ատենախոսության շարադրման գործընթացում հետազոտողը իրականացներ սոցիոլոգիական հարցումներ՝ փորձելով բացահայտել կոնկրետ նախագծերի և հաղորդումների «ժողովրդականությունը»:
3. Ավելի շատ լինեին պրակտիկ լրագրությունից բերված օրինակները, փաստերը, իրողությունները:
4. Ներկայացված առաջարկությունները պարունակեին հայաստանյան մուլտիմեդիային լրագրության դաշտում՝ կոնկրետ ԶԼՄ-ների

գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ քայլեր:

Սակայն այս ամենը որևէ ազդեցություն չի կարող ունենանալ աշխատանքի վրա Արման Ալեքսանդրի Սաֆարյանի «Ժամանակակից մուլտիմեդիային հարթակների զարգացման միտումները և հեռանկարները (ՀՀ և ՌԴ ԶԼՄ-ների օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված «Ժուռնալիստիկա» Ժ.01.06 մասնագիտությամբ:

Գրախոս՝
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ դոցենտի պ. Լ. Վ. Գալստյան

Դոցենտի պ. Լ.Վ. Գալստյանի
ստորագրությունը հաստատում եմ:
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ուսումնագիտական գծով
պրոռեկտոր, գիտական քարտուղար,
գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Մ. Իսպիրյան